ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԼՐԱՑՈՒՄԵՐԻ

Հոդված 39.1. Մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության և դատավարական ղեկավարման իրականացումը դատախազների խմբի կողմից

1. Անհրաժեշտության դեպքում վերադաս դատախազի հանձնարարականով կարող է ստեղծվել դատախազների խումբ: Հանձնարարականի մեջ պետք է նշվեն բոլոր դատախազները, որոնց հանձնարարվում է մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության և դատավարական ղեկավարման իրականացումը, այդ թվում՝ խմբի ղեկավար դատախազը:

Հոդված 39.2. Դատախազների խմբի ղեկավարի և անդամների լիազորությունները

1. Դատախազների խմբի ղեկավարը կազմակերպում է դատախազների խմբի աշխատանքը, ղեկավարում և համակարգում է մյուս դատախազների գործողությունները:

2. Դատախազների խմբի անդամն իրականացնում է սույն օրենսգրքի 38-րդ և 39-րդ հոդվածով սահմանված լիազորությունները դատախազների խմբի ղեկավարի կողմից սահմանված շրջանակներում:

3. Սույն օրենսգրքի 38-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ, 7-րդ, 8-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ, 16-րդ և 19-րդ կետերով, 39-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով սահմանված լիազորությունները իրականացվում են բացառապես դատախազների խմբի ղեկավարի կողմից:

4. Դատախազների խմբի ղեկավարը և անդամն իրականացնում են նաև սույն օրենսգրքով նախատեսված այլ լիազորություններ: